Հաշվետվություն

2021 թվականի մայիսի 25-ից 27-ը Բելառուսի Հանրապետություն (Մինսկ, Պինսկ) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Սուրեն Թովմասյան
   Արման Պետրոսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Կադաստրի կոմիտեի ղեկավար
   Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Բելառուսի Հանրապետություն, Մինսկ, Պինսկ, 2021 թվականի մայիսի 25-ից 27-ը

4. **Հրավիրող կողմը.**
   Բելառուսի Հանրապետության գույքի պետական կոմիտե, գնահատող կազմակերպությունների ասոցիացիա

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   - Բելառուսի Հանրապետության գույքի պետական կոմիտե փորձի ուսումնասիրում, փոխանակում,
   - Մասնակցություն «Գնահատման գործունեության զարգացումը. Համաշխարհային, ազգային, եվրասիական հարթություններ» թեմայով IV միջազգային գիտաժողովին

6. **Քննարկված թեմաները.**
   Քննարկվեցին օրակարգով նախատեսված հետևյալ հարցերը.
   - Գնահատման գործունեության կարգավորումը պետության կողմից,
   - անշարժ գույքի էլեկտրոնային գրանցման համակարգերի զարգացում և արդիականացում,
   - գեոդեզիա և քարտեզագրություն,
   - գույքի գնահատման ծառայությունների միասնական շուկայի ձևավորում եվրասիական տնտեսական միությունում,

- Պետության և բիզնեսի փոխհամագործակցությունը գույքի գնահատման գործունեության կարգավորման ժամանակ ԱՊՀ մասնակից պետություններում,
- Ինքնակարգավորվող կազմակերպությունները գույքի գնահատման ոլորտում, բելառուսական մոդելը «ինքնակարգավորումը գույքի գնահատման ոլորտում»,
- քաղաքացիական իրավունքի օբյեկտների գնահատման վերաբերյալ գիտական և պրակտիկ հարցեր,
- պատմական հուշարձանների գնահատում,
- IV միջազգային գիտաժողովի ավարտական փաստաթղթերի ընդունում:

7. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր.**

Հայաստանի Հանրապետության պատվիրակության կազմում էին Կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյանը, ղեկավարի տեղակալ Արման Պետրոսյանը և կադաստրային գնահատման և շուկայի վերլուծության վարչության պետ Հմայակ Հակոբյանը: Մինսկում պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ Բելառուսի հանրապետության գույքի պետական կոմիտեի ղեկավարության, Մինսկի հողային կադաստրի և պետական գրանցման քաղաքային գործակալության ղեկավարության և ազգային կադաստրային գործակալության ղեկավարության հետ: Քննարկվեցին փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող՝ գնահատման ոլորտի կարգավորման, գույքի գրանցման, գեոդեզիայի, քարտեզագրության և թվայնացման վերաբերյալ հարցեր, ինչպես նաև անշարժ գույքի էլեկտրոնային գրանցման համակարգերի զարգացմանն առնչվող հարցեր: Պինսկում IV միջազգային գիտաժողովին Կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյանը ներկայացրեց Հայաստանում գնահատման գործունեության կարգավորման ներկա վիճակը և նախատեսվող բարեփոխումները: Ներկայացվեց նաև գույքի գնահատման ոլորտի ինքնակարգավորման մեր տեսակետը: Պինսկում տեղի ունեցան հանդիպումներ գնահատող կազմակերպությունների ասոցիացիայի ղեկավարության և Բելառուսի հանրապետության մի քանի առաջատար գնահատող կազմակերպությունների ղեկավարների հետ: Քննարկվեցին փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցեր: Ձեռք բերվեց համագործակցության պայմանավորվածություն:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**. Բելառուսի Հանրապետության գույքի պետական կոմիտեի ղեկավարության հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց փորձի փոխանակման և անշարժ գույքի էլեկտրոնային գրանցման համակարգերի և գնահատման ոլորտի զարգացման շուրջ ավելի սերտ համագործակցության վերաբերյալ: Որոշվեց կազմակերպել բելառուսական պատվիրակության փոխադարձ այցը, ինչպես նաև երկու կողմերի

մասնագետների փորձի փոխանակումը տեսակոնֆերանսների միջոցով:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները.** Կադաստրի Կոմիտեն կապահովի Բելառուսի Հանրապետության գույքի պետական կոմիտեի ղեկավարության հետ հանդիպման և IV միջազգային կոնֆերանսի ընթացքում հնչած առաջարկությունների և ձեռք բերված պայմանավորվածությունների պատշաճ կատարումը:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

Սուրեն Թովմասյան

01.06.2021 թ.